

## Տաթևիկ Արայան

### ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր- Սմբատ Սպարապետ, կենսագրություն, մատենագրական ժառանգություն, Կիլիկյան Հայաստան, «Տաթեգիրք», «Դատաստանագիրք»:

Սմբատ Սպարապետի՝ որպես կրթված և բազմակողմանի զարգացած գործչի գնահատականը տրվել է դեռևս իր ժամանակակիցների կողմից. նա բնութագրվել է իբրև «բազմահանձար և նրբաբան իմաստից»<sup>1</sup>, «իմաստուն սպարապետ հայոց»<sup>2</sup>, «Սմբատ քաջ»<sup>3</sup> և այլն: Նրա համբավն ու հեղինակությունը, սակայն, չի սահմանափակվում միայն ժամանակակիցների գնահատականներով, այլ հիմնավորվում է նաև իր գործունեությամբ, իսկ Սմբատի հետաքրքրությունների շրջանակը ծավալուն է ու բազմաշերտ:

Սմբատ Սպարապետի ստացած նախնական կրթության, նրա մանկության ու պատանեկության տարիների մասին տեղեկությունները գրեթե բացակայում են: Որոշ կցկոտուր և բնույթով հպանցիկ նշումների հանդիպում ենք թերևս միայն Սմբատի «Տաթեգրքում»: Համաձայն այդ տեղեկությունների՝ նա ծնվել է 1208 թ.<sup>4</sup>, վաղ տարիքում աչքի է ընկել և գնահատանքի է արժանացել Լևոն Բ արքայի կողմից<sup>5</sup>:

Սմբատ Սպարապետը քաղաքական ասպարեզ ելավ իր եղբայր Հեթում Ա գահակալումից հետո (1226թ.), երբ նրա հայրը՝ Կոստանդին պայլը, իր ձեռքը վերցնելով երկրի փաստական ղեկավարումը՝ որդիներին նշանակեց կարևոր պաշտոնների<sup>6</sup>. Սմբատը զիխավորեց սպարապետության գործակալությունը մինչև իր կյանքի վերջը: Նշենք, որ սպարապետության հիսուն տարիների ընթացքում Սմբատը բազմիցս առաջնորդել է Կիլիկիայի հայկական թագավորության բանակը, սակայն ժամանակի ռազմաքաղաքական իրադարձությունները ներկայացնող աղբյուրներն այստեղ նույնպես սակավախոս են: Ռազմական բախումներում Սմբատ Սպարապետի մասնակցության մասին համեմատաբար մանրամասն տեղեկություններ հայտնող միակ աղբյուրը այս դեպքում էլ «Տաթեգիրքն» է: Նմանօրինակ առաջին հաղորդումը վերաբերում է 1245թ. Իկոնիայի սուլթան Ղիյաս աղ-դին Քեյ-Խոսրով Բ-ի ներխուժմանը հայկական թագավորություն, որում մասավորապես նշվում է. «Նա ոխացեաւ սուլտանն

<sup>1</sup> Գ. Հովսեփիյան, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 952:

<sup>2</sup> ՍՍ, ձեռագիր թիվ 637, թ. 9:

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 278:

<sup>4</sup> ՍՍ, ձեռագիր թիվ 4584, թ. 371ա:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 528:

Քայ Խոսրու Շահն եւ ամէն Տաճկունք, ժողովեաց հեծեալ, եւ առաջնորդութեամբ պարոն Կոստանդեայ Լամբրոնի տիրոջն, մտաւ ընդ Պապառնին լեառն ի վայր ու այրեաց զամէնն: Եւ թագաւորահայրն պարոն Կոստանդին եւ Սմբատ Գունդստապն եկին մտան ի Տարսուս, եւ թագաւորն իւր հեծելովն կայր ի յԱտանայ: Թուրքն սղարեց զՏարսուս, իշան ի դարոտն հետ գետին, գերեցին զամէն երկիրն եւ կացան վեց օր, եւ ապա ել ածին, որ ելնէին ընդ Կուկլկայ Կապամն»<sup>1</sup>:

Հաջորդ տարի թշնամու զորքը կրկին արշավում է հայկական թագավորության դեմ՝ պաշարելով Կապամն ու Տարսոնը: Սակայն սուլթանի անակնկալ մահը ստիպում է հաշտություն կնքել հայկական կողմի հետ: Վերջինս, անտեղյակ լինելով այդ մասին, թշնամուն է հանձննում Սելևկիայից հյուսիս գտնվող Պրականա ամրոցը<sup>2</sup>: «Տարեգործից» բացի, այս արշավանքի մասին որոշակի տեղեկություններ են հայտնում Կիրակոս Գանձակեցին<sup>3</sup> և Հեթում Ախտուց տիրոջ ժամանակագրությունը<sup>4</sup>, որոնք, սակայն, չեն անդրադանում Սմբատ Սպարապետի մասնակցությանը ռազմական գործողություններին: «Տարեգործում» հերթական անգամ Սմբատ Սպարապետը ռազմական գործողությունների կենտրոնում է հայտնվում 1259թ. Արակիա քաղաքի մոտ Իկոնիայի սուլթան Ռուքն-ադ-դին Ղիջ Արսլան Դ-ի բանակի դեմ ճակատամարտի դրվագում. «... սպարապետն Հայոց Սմբատ ... առեալ նիզակ զնայր ի վերայ և դիաթաւալ ի նոցանէ յերկիր ընկենոյր, և ազատէր ի նոցանէ զփեսայն իւր Վահրամ և քաջակ մղէր զնոսա յիշեվանս իւրեանց»<sup>5</sup>: Սմբատի գլխավորությամբ հայկական զորքերը փախուստի մատնելով թշնամուն՝ տանում են փայլուն հաղթանակ: Սմբատը հիշատակվում է նաև թուրք կարամանների դեմ Կիլիկիայի հայկական թագավորության մղած կրիվների առիթով<sup>6</sup>:

Սմբատ Սպարապետը մասնակցել է նաև 1266 թ. մամլուքների ավերիչ արշավանքի հետևանքով Մարիի լեռնանցքում տեղի ունեցած ճակատամարտին, որում հայկական զորքը ծանր պարտություն կրեց՝ ունենալով ցավալի կորուստներ. Հեթում Ա արքայի որդիներից Թորոսը սպանվեց, իսկ Լևոնը՝ գերվեց: Գերի ընկավ նաև Սմբատ Սպարապետի որդին՝ Վասիլ Թաթարը<sup>7</sup>: Անդրադանալով այս իրադարձություններին՝ արաբ պատմիչ Ալ-Մաքրիզին հայտնում է հետևյալը. ՏՆՐԱ Եղբայրը և հորեղբայրը սպանվեցին: Մյուս հորեղբայրը փախուստ տվեց, իսկ այս

<sup>1</sup> Տե՛ս ՍՍ ձեռագիր, թիվ 4584, թ. 372բ:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 272:

<sup>4</sup> Տե՛ս Հեթում ախտուց Տիրոջ և Վասիլ Մարաջախստի ժամանակագրությունները, «Պատմաբանափական հանդես», 1963, № 4, էջ 190:

<sup>5</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրը, Վեմետիկ, 1956, էջ 235:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 238-239:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 247:

Վերջինի որդին գերիների թվում էր<sup>1</sup>: Այս տեղեկությունը կարևորվում է նրանով, որ Մատիհ Ճակատամարտին Սմբատ Սպարապետի մասնակցությունը փաստող միակ հաղորդումն է, այն դեպքում, երբ մյուս աղբյուրները, այդ թվում և «Տարեգիրքը»<sup>2</sup>, ներկայացնելով ռազմական գործողությունները, լրում են այս մասին: Նմանօրինակ լրության պատճառը թերևս պետք է տեսնել մի կողմից հեղինակների՝ իրենց առջև դրված կոնկրետ նպատակների և մյուս կողմից՝ տեղի ունեցած իրադաձություններում «կարևորը» առաջնահերթ ներկայացնելու միջնադարյան հեղինակի ընկալման մեջ: Նույն աղբյուրները, գրեթե առանց բացառության, հիշատակում են Սմբատ Սպարապետի մասնակցությունը մեկ այլ՝ 1276թ Սարվանդիքարի մոտ Եգիպտոսի մամլության սուլթանության և Կիլիկիայի հայկական թագավորության գործերի միջև տեղի ունեցած վճռական ճակատամարտին: Հայկական գործերը Սմբատ Սպարապետի գլխավորությամբ փայլուն հաղթանակ են տանում, որով, սակայն, ավարտվում է Սմբատի շուրջ կեսդարյա գորավարական գործունեության շրջանը: Հետապնդելով թշնամուն՝ Սմբատ Սպարապետը, վիրավորվում է Սարվանդիքարի անտառում և շուտով՝ մահանում<sup>3</sup>:

Աղբյուրները վկայում են նաև Կիլիկիայի հայկական թագավորության և մոնղոլների միջև բանակցությունների ընթացքում Սմբատ Սպարապետի ունեցած մեծ ներդրման մասին:

Մասնավորապես գրավելով հսկայական տարածքներ՝ մոնղոլները 13-րդ դարի 40-ական թթ. մոտեցան Կիլիկիայի հայկական թագավորության սահմաններին: Մոնղոլական ավերիչ հարձակումներից խուսիելու համար Հեթում Ա-ը և նրա համախոհները որոշեցին խաղաղություն հաստատել և դաշինք կնքել մոնղոլների հետ: Այդ նպատակով Սմբատ Սպարապետի և Կոստանդին թագավորահոր գլխավորությամբ դեսպանություն ուղարկվեց Կեսարիա՝ մոնղոլ գորավար Բաչու Նուինի մոտ<sup>4</sup>: Ընդունելով բարեկամության նրանց առաջարկը՝ Բաչու Նուինը, սակայն, պահանջեց, որ Հեթում Ա-ը անձանք ներկայանա մեծ դանին<sup>5</sup>, ինչպես նաև իրեն հանձնեն Կիլիկիայում ապաստան գտած Իկոնիայի քեյ Խոսրով Բ սուլթանի

<sup>1</sup>Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375թթ., Երևան, 2008, էջ 65:

<sup>2</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրը, էջ 246, Սամուել Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն, Երևան, 2014, էջ 253, Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 68, Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 51: Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց, Երուսաղեմ, 1974, էջ 53-54:

<sup>3</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 72: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժգ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 463: Մանր Ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հատ. Ա, կազմեց Վ. Հակոբյան, էջ 105:

<sup>4</sup> Տե՛ս Մանր Ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հատ. Բ, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 346: Կիրակոս Գանձակեցի, էջ 284-285:

<sup>5</sup> Տե՛ս Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 305:

ընտանիքը<sup>1</sup>: Շրջապատված լինելով մահմեղական պետություններով՝ հայկական կողմը չուներ այլ ելք, քան կատարել Բազուի պահանջը: Ելնելով սեփական երկրի շահերից՝ Հեթում Ա-ը մոնղոլներին հանձնեց սուլթանի ընտանիքը: Այնուհետև Սմբատ Սպարապետը ուղևորվեց մոնղոլների տերության մայրաքաղաք, ուր կարողացավ համաձայնություն ձեռք բերել հայ-մոնղոլական դաշինքի հաստատման հարցում: Սմբատ Սպարապետի այս դեսպանության մասին Կիրակոս Գանձակեցին գրում է. «Արքայն Հայոց Հեթում, որ ի Կիլիկիա, առաքեաց զեղբայր իւր Սմբատ զորավարն առ դանս երևելի պատարագօք: Եւ նորա երթեալ խաղաղութեամբ զերկայնութիւն ճանապարհին, և յոյժ մեծարեալ ի նմանէ, դարձաւ երևելի փառօք, և հաւատարիմ հրովարտակօք՝ տուեալ նմա գաւառս բազումս և բերդս յոլովս, զոր յառաջ լեալ էր Լևոնի արքայի, և զկնի մահուանն առ ի նոցունց Ալաղին սուլտանն հոռոմոց»<sup>2</sup>:

Սմբատ Սպարապետը, ավարտելով Գյույուկ խանի հետ բանակցությունները, 1250թ. վերադարձավ Կիլիկիա՝ իր հետ բերելով Գույուկ խանից ստացած հրովարտակ և ոսկյա տախտակ, որով խանը ճանաչում էր Հեթումի իշխանությունը Կիլիկիայում: Ժամանակի իրադարձությունները ներկայացնող Գրիգոր Ակներցին մոնղոլների հետ բանակցություններում ձեռք բերված հաջողությունները բացառապես վերագրելով Սմբատ Սպարապետին՝ նշում է. « Եւ տեսեալ զասպարապետն Հայոց՝ Սային դանն յոյժ ուրախացաւ վասն քրիստոնէութեան հաւատոյնմ եւս առաւել վասն կորովի եւ իմաստուն բանիցն, զոր խաւեցաւ ըսպարապետն Հայոց Սմբատ առաջի նորայ »<sup>3</sup>:

Սմբատ Սպարապետը շարունակեց իր դիվանագիտական գործունեությունը նաև հետագայում: Հայ-մոնղոլական դաշինքի վերջնական կնքման համար նա ուղեկցեց Հեթում Ա-ին Մոնղոլիա՝ Մանգու մեծ խանի մոտ: Սմբատ Սպարապետի՝ Հեթում Ա-ի հետ Մոնղոլիա ուղևորվելու և 1254թ. հայ-մոնղոլական պայմանագրի կնքմանը մասնակցելու մասին միակ հիշատակումը պարունակող Մխիթար Այրիվանեցին նշում է. « ... գնաց առ նա Հեթում՝ արքայն Հայոց և գունդստապլ Սմբատ՝ եղբայր իւր ... »<sup>4</sup>:

Աղբյուրները հայտնում են Սմբատ Սպարապետի՝ մոնղոլների հետ մեկ այլ բանակցությունների մասին<sup>5</sup>, սակայն առանց մանրամասների:

Սմբատի գործուն մասնակցությամբ հայ-մոնղոլական բանակցությունների արդյունքում կնքվեց Կիլիկյան Հայաստանի համար շահավետ մի պայմանագիր, որով Կիլիկիայի հայկական թագավորությունը խուսափեց մոնղոլական ներխուժումից,

<sup>1</sup>Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 285:

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 317:

<sup>3</sup> Գրիգոր Ակներցի, էջ 32:

<sup>4</sup> Մխիթար Այրիվանեցի, էջ 66:

<sup>5</sup> Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հատ. Ա, էջ 84:

ինչպես նաև ձեռք բերեց հզոր դաշնակից հարևան մահմեդական պետությունների դեմ պայքարում:

Սմբատ Սպարապետը, ռազմական և դիվանագիտական գործունեությունից զատ, հայտնի է նաև իր ստեղծագործություններով: Նա թողել է հարուստ և բազմաժանր մատենագրական ժառանգություն, հեղինակել՝ օրենսդրական, պատմական բնույթի ստեղծագործություններ, պիեմներ, բանաստեղծություններ, նամակներ: Նրա անունով պահպանվել են հիշատակարաններ<sup>1</sup>: Սմբատ Սպարապետի մատենագրական ժառանգության ուսումնասիրությունը կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից. այն կարևոր է ինչպես միջնադարյան հայ իրավունքի ուսումնասիրման, այնպես էլ Կիլիկիայի հայկական թագավորության պատմության լուսաբանման տեսանկյունից:

Սմբատ Սպարապետի հիմնական աշխատություններից է «Տարեգիրքը»: Երկի ստեղծման հստակ թվագրումը հայտնի չէ: Նախապես նա ընդգրկել է X դարի երկրորդ կեսից XIII դարի վերջը ներառող ժամանակագրական սահմանները, իսկ XIV դարում՝ շարունակվել անհայտ հեղինակի կողմից, ով դեպքերի շարադրանքը հասցել է մինչև 1331թ. իրադարձությունների նկարագրությունը: Մեզ են հասել «Տարեգրքի» մեկ տասնյակից ավելի ձեռագրեր (13 ամբողջական, 1 պատառիկ), որոնք խմբագրական բնույթի մի շարք տարբերությունների պատճառով դասակարգվում են երկու խմբի (Ա և Բ):

«Տարեգրքի» առաջին հատվածը ներկայացնում է քաղագրություն՝ կատարված տարբեր աղբյուրներից: Սակայն քաղագրություն լինելով՝ այն վրա կրում է հեղինակի ստեղծագործական աշխատանքի կնիքը և այս առումով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նրա աշխարհայացքային պատկերացումների, հետաքրքրությունների շրջանակի և գաղափարական դիրքորոշման տեսանկյունից:

Աշխատության երկրորդ՝ ինքնուրույն հատվածը, որում հեղինակը նկարագրվող դեպքերի ժամանակակիցն է և ականատեսը, արժեքավոր աղբյուր է XIII դարի Կիլիկիայի հայկական թագավորության պատմության լուսաբանման համար: Նշելի է, որ «Տարեգիրքը» տարածքային առումով լայն ընդգրկում չունի: Հեղինակը մանրամասն չի անդրադարձնում հարևան երկրների պատմությանը և չի կատարում հատուկ «դադարներ» Կիլիկիկիայի սահմաններից դուրս կատարված իրադարձությունների մասին պատմելու համար, և եթե նա խոսում է սելջուկ-թուրքերի, մոնղոլների, Բյուզանդիայի կամ խաչակիրների մասին, ապա դա անում է հիմնականում հայերի հետ նրանց հարբերությունների կամ ինչ-ինչ այլ

<sup>1</sup> Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատ. Է, յօրինեց՝ Հ. Սահակ Վրու. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 479-492: Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1970, էջ 577-578: Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 951-958: ՍՍ ձեռագիր թիվ 7644, թ. 124ա, 189թ:

առնչությունների հետ կապված: «Տարեգրքի» հետաքրքրիր առանձնահատկություններից է նաև, որ երկը շարադրվել է աշխարհիկ անձի կողմից:

Նշենք, որ «Տարեգիրքը» կարևոր է ոչ միայն որպես առանձին աղբյուրի առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից, այլև՝ առհասարակ ժամանակագրությունների ժամանակագրությունների ժամանակագրությունների առաջացման և հետագա զարգացման խնդիրները լուսաբանելու առումով:

Սմբատ Սպարապետի մյուս արժեքավոր աշխատությունը Կիլիկիայի հայկական թագավորության պաշտոնական օրենսգիրքն է՝ «Դատաստանագիրքը»: Այս աշխատությունը ստեղծվել է 1265թվականին: Համաձայն հեղինակի հաղորդած տեղեկությունների՝ «Դատաստանագրքի» ստեղծման համար օգտագործվել են իրավունքի բնագավառում նախկինում եղած օրենսդրական մի շարք մշակումներ, որոնք ելնելով Կիլիկիայի հայկական թագավորության իրականության կողմից թելադրվող պայմաններից՝ ենթարկվել են անհրաժեշտ փոփոխությունների՝ համարելով և ամբողջացնելով նոր օրենսգիրքը:

«Դատաստանագրքի» ձեռագրերից հայտնի են երկուսը, որոնցից մեկը՝ թիվ 487, գտնում է Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում<sup>1</sup>, մյուսը՝ թիվ 107, Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանում<sup>2</sup>: Այս ձեռագրերը հիմք են հանդիսացել «Դատաստանագրքի» իրատարակումների և թարգմանությունների համար<sup>3</sup>:

«Դատաստանագիրքը» բաղկացած է յոթ հատվածներից և 202 հոդվածներից, որոնցում հեղինակն անդրադառնել է պետական, վարչական, եկեղեցական, քաղաքացիական, ամուսանական, ընտանեկան, ժառանգական, դատական, առևտարական և իրավունքի մի շարք այլ ոլորտների:

Նշենք, որ օրենսգրքի ստեղծումը ժամանակի կողմից պարտադրված անհրաժեշտություն էր: Հավանաբար, այդ էր պատճառը, որ Սմբատ Սպարապետը նախ իին ֆրանսերենից հայերեն է թարգմանել Անտիոքի ասսիզները՝ փորձելով գործածել դրանք Կիլիկիայի հայկական թագավորության տարածքում: Սակայն ասսիզները, որոնք բաղկացած էին ընդամենը երեսունութ ոչ մեծ գլուխ-հոդվածներից, ունեին իրավական հարաբերությունների կարգավորման սահմանափակ շրջանակ և հիմնականում վերաբերում էին վասալ-սյուզերեն փոխհարաբերություններին, նրանց

<sup>1</sup> Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1965, էջ 330-331:

<sup>2</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատ. է, էջ 747-758:

<sup>3</sup> Դատաստանագիրք Սմբատայ իշխանի, լոյս ընծայեց Ա. Ղլտճեան, Ս. Էջմիածին, 1918, Sempadscher Kodex aus dem 13 Jahrhundert oder mittelarmenisches Rechtsbuch, Kommentar. Herausgegeben, übersetzt und erläutert von Josef Karst, Strassburg, 1905, Сմբат Спарапет, Судебник, составление текста, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Г. Галстяна, Ереван, 1958:

իրավունքներին և պարտականություններին<sup>1</sup> և չին բավարարում Կիլիկիայի հայկական թագավորության իրավական ոլորտի պահանջները։ Ուստի Սմբատ Սպարապետը ձեռնամուխ եղավ նոր օրենսգրքի ստեղծմանը։

Ինքը՝ հեղինակը, «Դատաստանագրքի» առաջաբանում գրում է. «... բազում աշխատանաւք աշխատեցայ ի դատաստանագիրքս ծերացեալ մտաւք, Վասն զի այլակերպած էր եւ հեռացած ի հին հայ բարէն ի նորոյս՝ հայնց որ իսկի չին ի հասկնալ, եւ ոչ յօկտել գայր։ Եւ ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի հին եւ ի դժւարաբառ եւ յանհասկընալի գրոց ի մեր հեշտալուր եւ ի սովորական բառս ... : Եւ արդ գրեցի զսա վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ եւ գոյանալոյ երկրի. Եւ ապա վասն աշխարհական դատաւորաց եւ թագաւորաց»<sup>2</sup>: Այն ջանքերը, որ Սմբատ Սպարապետը թափեց այս աշխատությունը կազմելու համար, ծառայեցին իրենց նպատակին։ Պարունակելով նորմեր իրավունքի գրեթե բոլոր բնագավառներից՝ «Դատաստանագիրքը» ավելի քան մեկ դար կարգավորեց իրավական հարաբերությունները Կիլիկիայի հայկական թագավորության տարածքում։ Ավելին, այն իր բազմաթիվ հոդվածներով դարձավ ոչ միայն հայ իրավական մտքի արժեքավոր ձեռքբերումը, այլև կարևոր աղբյուր՝ միջնադարյան իրավունքի ուսումնասիրման համար։

Սմբատ Սպարապետից մեզ են հասել նաև նամակներ, որոնցից առանձնապես արժեքավորը 1247 թ. Սամարղանդից Կիպրոսի թագավոր Հենրիխ Լուգինյանին հասցեագրվածն է։ Այստեղ հեղինակը հարուստ տեղեկություններ է հաղորդում ինչպես մոնղոլների նվաճումների, նրանց բարքերի և սովորույթների, այնպես էլ նրանցում քրիստոնյա տարրի նշանակալից դերի մասին<sup>3</sup>։

Սմբատ Սպարապետի գրչին են պատկանում նաև մի շարք բանաստեղծություններ և պոեմներ<sup>4</sup>, որոնցից հատկապես նշանավոր է 1269թ. գրված «Ի Ճաշոց գիրս» պոեմը՝ նվիրված Մատիի Ճակատամարտին<sup>5</sup>։ Այդ պոեմում նա հանգամանորեն ներկայացնում է Ճակատամարտի մանրամասնություններն ու նրա տխուր հետևանքերը։ Նշվածից զատ՝ Սմբատ Սպարապետը զբաղվել է նաև քերականությամբ և երաժշտությամբ<sup>6</sup>։

Ամփոփելով նշենք, որ Սմբատ Սպարապետը իր ժամանակի ամենահետաքրքիր և տաղանդավոր եղակի գործիչներից մեկն է, ով հաջողությամբ համատեղեց

<sup>1</sup> Assises d'Antioche reproduites en français et publiees au sixieme centenaire de la mort de Sempad le connetable, leur ancien traducteur armenien, par H. Alishan, Venise, 1876.

<sup>2</sup> Տե՛ս Սմբատ Սպարապետ (Գումբատար), Դատաստանագիրք, էջ 5:

<sup>3</sup> Տե՛ս Ծմբատ Սպարապետ, Լետопись, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Галстяна, Ереван, 1974, стр. XVIII-XX:

<sup>4</sup> Գ. Հովսեփիան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 951-958, Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 71:

<sup>5</sup> Assises d'Antioche reproduites en français et publiees au sixieme centenaire de la mort de Sempad le connetable, p. 93: Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 71-72:

<sup>6</sup> Տե՛ս Ա. Գալստյան, Սմբատ Սպարապետ, Երևան, 1961, էջ 89-92:

ռազմական և գիտական գործունեությունը, իսկ նրա մատենագրական ժառանգությունը, որն արգասիքն է իր ժամանակաշրջանի պատմամշակութային իրողության, կարևորվում է ոչ միայն զուտ պատմագրական հարցեր արձարձելու, այլև առհասարակ հայ հոգևոր մշակույթի պատմությունը լիարժեք ուսումնասիրելու առումով:

**Татевик Атаян, Жизнь и литературное наследие Смбата Спарапета - Смбат Спарапет является одним из выдающихся деятелей духовной культуры XIII века, кто успешно совмещал военную и научную деятельность. Будучи военачальником, он организовал защиту Киликийского армянского царства более полувека. Смбат Спарапет имел большой вклад и в дипломатической сфере, проводя эффективные переговоры с монголами. Он также оставил богатое литературное наследие: является автором произведений законодательного и исторического характера, поэм, стихов и писем, которые являются важными источниками для изучения как средневекового армянского права, так и для истории Киликийского армянского государства.**

**Tatevik Atayan, The life and literary heritage of Smbat Sparapet - Smbat Sparapet is one of the outstanding figures of spiritual culture of the XIII century. He successfully combined military and scientific activity. Being the military leader, he organized protection of the Armenian kingdom of Cilicia more than half a century. Smbat Sparapet had a big contribution in the diplomatic sphere, holding effective negotiations with Mongols. He also left rich literary heritage: he is an author of the legislative and historical works, poems, verses and letters, which are important sources about both medieval Armenian right and history of the Armenian kingdom of Cilicia.**

**Տաթևիկ Աթայան-ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ, պատմության ֆակուլտետի օպերատոր:**